ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բարի գալուստ www.dcc.am («Կայք»), որը գործարկվում է **«Դիլիջանի համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպության** («ԴՀԿ», «մենք», «մեզ» և «մեր») կողմից (պետական գրանցման համար՝ 211.171.1132858, իրավաբանական հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Գետափնյա փողոց, շենք 7):

Սույն Օգտագործման պայմանները կարգավորում են Ձեր կողմից Կայքի օգտագործումը: Ուստի՝ նախքան Կայքն օգտագործելը, խնդրում ենք ուշադիր ծանոթանալ սույն Օգտագործման պայմաններին:

Կայքն օգտագործելով՝ Դուք ընդունում եք սույն Օգտագործման պայմանները և Գաղտնիության քաղաքականությունը, որը սույն Օգտագործման պայմանների անբաժանելի մասն է կազմում:

ԴՀԿ-ն իրավունք ունի ժամանակ առ ժամանակ առանց Ձեզ տեղեկացնելու թարմացնել կամ լրացումներ կատարել սույն Օգտագործման պայմանների մեջ: Յուրաքանչյուր թարմացում, տվյալ փոփոխության ամսաթվով, կհրապարակվի Կայքում: Ուստի՝ խնդրում ենք երբեմն այցելել այս էջ՝ վստահ լինելու, որ շարունակում եք գոհ մնալ Օգտագործման պայմանների գործող տարբերակից: Ձեր կողմից Կայքի օգտագործումը Օգտագործման պայմանների նոր խմբագրության Կայքում հրապարակումից հետո, նշանակում է, որ Դուք ընդունում եք փոփոխված Օգտագործման պայմանները:

Դուք համաձայնում եք օգտագործել Կայքը միայն օրինական նպատակներով և այնպիսի եղանակով, որը չի ոտնահարում որևէ երրորդ անձի իրավունքները կամ չի սահմանափակում կամ խոչընդոտում որևէ երրորդ անձի կողմից Կայքի օգտագործումը:

ԴՀԿ-ն չի երաշխավորում, որ սույն Կայքը կամ Կայքում պարունակվող նյութերում պարունակվող գործառույթները կլինեն անխափան կամ առանց սխալների, թերությունները կշտկվեն, կամ որ Կայքը կամ այն հասանելի դարձնող սերվերը զերծ կլինեն վիրուսներից կամ սխալներից կամ որ ներկայացնում է նյութերի ամբողջական ֆունկցիոնալությունը, ճշգրտությունն ու հուսալիությունը:

Կայքէջի միջոցով տրամադրված ցանկացած տեղեկատվություն համարվում է ճշգրիտ, ամբողջական և տրամադրված օգտատիրոջ կողմից բարեխղճորեն տրամադրված: Տվյալները ներկայացնող անձի կամ կազմակերպության պատասխանատվությունն է ապահովել, որ բոլոր մանրամասները լինեն ճշմարտացի, արդիական և զերծ սխալներից կամ բացթողումներից: Տվյալների ճշգրտության այս կանխավարկածը հանդիսանում է հետագա ստուգման, մշակման կամ որոշումների կայացման հիմքը:

Նվիրատվությունները

Կատարելով համապատասխան գործողությունները՝ Դուք համաձայնում եք գումար (նվիրատվություն) փոխանցել ԴՀԿ-ին կամ նրա գործընկերներին, որոնք ներկայացված են Կայքում՝ որպես նվիրատվություն:

Կատարելով նվիրատվություն՝ Դուք երաշխավորում եք, որ գործունակ եք, ունեք նվիրատվություն կատարելու Հայաստանի Հանրապետության գործող կամ ցանկացած այլ կիրառելի օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքները և լիազորությունները,

ինչպես նաև նվիրատվությունը կամավոր է և գիտակցում են, որ այն ենթակա չէ վերադարձի:

Դուք հասկանում եք, որ Ձեր նվիրատվությունը կարող է ուղղվել ԴՀԿ-ի և/կամ վերջինիս գործընկերների կողմից իրականացվող ցանկացած ծրագրի աջակցությանը:

Կայքի միջոցով ստացված նվիրատվությունը օգտագործվում է ԴՀԿ կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան:

Հեղինակային իրավունքների սահմանափակումները

- Կայքում ցուցադրված բոլոր կամ որևէ տարրի ձեռնարկատիրական նպատակներով օգտագործումը կամ հրապարակումը առանց ԴՀԿ-ի կողմից նախնական թույլտվության խստիվ արգելվում է: Սույն Օգտագործման պայմաններում պարունակվող որևէ դրույթ չի կարող դիտարկվել որպես ԴՀԿ-ի կողմից Կայքում ցուցադրված որևէ տարրի օգտագործման նպատակով դրա նկատմամբ լիցենզիայի տրամադրում:
- Կայքում ցուցադրված տարրերը կարող են պատճենվել անձնական օգտագործման համար՝ պայմանով, որ հեղինակի և աղբյուրի նշումը ևս կպատճենվեն և փոփոխություններ չեն կատարվի: Այնուամենայնիվ, որոշ տեքստեր և լուսանկարներ կարող են հրապարակվել սույն Կայքում՝ համապատասխան իրավատերերի (որոնք ԴՀԿ-ն չեն) թույլտվությամբ: Նման տեքստերի և լուսանկարների բոլոր հեղինակային իրավունքները վերապահված են դրանց իրավատերերին, և դրանք պատճենելու կամ այլ կերպ օգտագործելու թույլտվությունը պետք է հայցվի և ստացվի անմիջապես իրավատիրոջից:

Ցանկացած դեպքում կայքէջի բովանդակությունը (նկարներ, հոդվածներ, մեդիա և այլն) պատկանում է կամ լիցենզավորված է ԴՀԿ-ին, և կայքէջում ցուցադրված ոչ մի տարր չի կարող կիրառվել այնպիսի եղանակով, որը կարող է որևէ կերպ վնասել ԴՀԿ-ին կամ երրորդ անձանց, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը (այդ թվում՝ տվյալները, լուսանկարները) օգտագործված են կայքէջում:

Հետադարձ կապ

Սույն կայքի՝ «Կապ մեզ հետ» բաժնի միջոցով հնարավոր է ԴՀԿ-ին ուղղել տարաբնույթ հաղորդագրություններ՝ նամակների, հարցադրումների, դիմումների, առաջարկությունների տեսքով:

Ուղարկելով հաղորդագրություն՝ ուղարկող անձը գիտակցում և լռելյայն համաձայնվում է, որ իր կողմից լրացված տվյալները, այդ թվում՝ անձնական տվյալները մշակվելու են ԴՀԿ կողմից՝ Գաղտնիության քաղաքականությանը համապատասխան:

Երրորդ անձանց վեբ կայքերը

Կայքը կարող է պարունակել հղումներ դեպի այլ վեբ կայքեր: Բոլոր այդպիսի հղումները տրամադրվում են Ձեր հարմարավետության համար, և Ձեր կողմից նման վեբ կայքերի օգտագործումը կկարգավորվի տվյալ վեբ կայքերի կիրառելի օգտագործման պայմաններով և գաղտնիության քաղաքականությամբ: ԴՀԿ-ն պատասխանատվություն չի կրում արտաքին վեբ կայքերի բովանդակության համար:

Սույն Օգտագործման պայմանների և դրանից բխող ցանկացած հարաբերությունների նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Եթե ունեք հարցեր սույն Օգտագործման պայմանների կամ Կայքի օգտագործման վերաբերյալ, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ՝ contact.us@dcc.am էլ. հասցեով: